ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔ

Վերապատրաստող կազմակերպություն ՀՀԿԳՄՍ
<<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց>>
Հերթական ատեստանորման ենթակա
Ուսուցիչների վերապատրաստում

Հետազոտության թեման՝ **Բանավոր խոսքի զարգացումը ուսումնառության ընթացքում**

Առարկա՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ **Լուսինե Մկրտչյան**
անուն,ազգանուն

Դպրոց՝ <<Վարդենիսի Հ. Համբարձումյանի անվան ավագ դպրոց>>ՊՈԱԿ
դպրոց

Աշխատանքի ղեկավար՝ **Հասմիկ Բեյբության**
անուն,ազգանուն

Անցկացման վայրը՝ **Վարդենիս**

ՎԱՐԴԵՆԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ..... 6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....22

ԴԱՍԻ ՊԼԱՆ ----------23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը.Օտար լեզվով բանավոր խոսքի ընկալումը լեզվի իմացության հիմնարար բաղադրիչներից է և դրա ուսուցումը իրավամբ կազմում է օտար լեզվի դասավանդման հենասյուներից մեկը: Հաղթահարման տեսանկյունից դիտարկելիս, խոսքի ընկալումը, լինելով որոշիչ գործոն հաղորդակցության գործընթացում, միաժամանակ լեզվական չորս հմտություններից (խոսել, լսել, գրել, կարդալ) ամենադժվարն է: Չէ՞ որ լեզվի իմացության իրական մակարդակը ակնհայտորեն պարզ է դառնում միայն լեզվակրի հետ անբռնազբոս, ոչ նախօրոք ծրագրված զրույցի ժամանակ: Թե հաղորդակցության ժամանակ ինչպիսի կարևորություն է ներկայացնում բանավոր խոսքի ընկալումը կարելի է դատել հետևյալ պարզ փաստից: Գիտնականները հաշվարկել են, որ մեծահասակներն իրենց ժամանակի մոտ 70%-ը ծախսում են հաղորդակցության վրա, որից մոտ 45% -ը բաժին է ընկնում լսելուն: Երբ այն համեմատում ենք խոսելու 30%-ի, կարդալու 16%-ի և գրելու 9%-ի հետ (Adler, R., Rosenfield, L. and R. Proctor. 2012), ապա պարզ է դառնում, որ առյուծի բաժինը լսելու գործընթացինն է՝ այսինքն՝ բանավոր խոսքի ընկալմանը: Հստակորեն կարող ենք ասել, որ այս գործոնը արտացոլված է օտար լեզվի ցանկացած միջազգային ճանաչում վայելող քննության կառուցվածքում և այլն: Շարադրված դիտարկումների հաշվառմամբ կարող ենք փաստել, որ հանրակրթական ուսումնական հաստատություններում ռուսաց լեզվի ուսուցման պրոցեսում սովորողների բանավոր խոսքի զարգացումն ունի կարևոր գործնական նշանակություն, քանի որ հանրակրթական ուսումնական հաստատություններում է դրվում սովորողների ռուսաց լեզվով հաղորդակցման հիմքը: Ռուսաց լեզվի դասավանդման արդի մեթոդիկայի կարևորագույն խնդիրներից մեկը բանավոր

խոսքի տիրապետումն է: Դա շատ բնական է և հասկանալի, որովհետև լեզու ասելով՝ մենք նախ և առաջ հասկանում ենք բանավոր խոսք, որի գերազանց, հասարակական դերն անվիճելի է: Սակայն այս միտքը չպետք է աղավաղել՝ վերածելով ռուսաց լեզվի ուսուցումը սոսկ մեքենայական հարց ու պատասխանի, բանավոր խոսքի մակերեսային և միակողմանի տիրապետմանը: Այն ուսուցանվում է բազմակողմանիորեն, թե տեսական և թե գործնական տեսանկյուններով:

Հետազոտության նպատակը.Սույն հետազոտության նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել ռուսաց լեզվի դասավանդման առանձնահատկությունները, ինչպես նաև վերհանել քննարկվող հարցերի մասին առկա խնդիրները:

Հետազոտության խնդիրները.Սույն հետազոտության խնդիրներն են՝ ներկայացնել բանավոր խոսքի զարգացման առանձնահատկությունները, ուսումնասիրել բանավոր խոսքի դասավանդման առանձնահատկությունները, քննարկել ռուսաց լեզվով հաղորդակցման և բանավոր խոսքի զարգացման առանձնահատկությունները: Ռուսաց լեզվի բանավոր խոսքի ձևավորումը համակարգված և աստիճանական աշխատանք է պահանջում: Դպրոցում հատուկ ուշադրություն պետք է դարձնել բանավոր խոսքի ունակությունների զարգացմանը, որը սերտորեն կապված է ընթերցանության տեխնիկայի հետ և պետք է ընթանա վերջինիս զուգահեռ: Քանի որ աշակերտը միայն ուսուցչից է լսում ռուսաց լեզվով խոսքը, ուստի դասը պետք է վարել միայն ռուսաց լեզվով: Սա բանավոր խոսքի ուսուցման առաջին պայմանն է: Առաջին անգամ լսելով օտար լեզուն, աշակերտը միշտ ձգտում է կարդացած և լսած բոլոր նախադասություններն ու բառերը թարգմանել մայրենի լեզվով: Ուստի մեր նպատակն է օտար լեզուն դասավանդել

այնպես, որ սովորողներն աստիճանաբար ազատվելով մայրենի լեզվի շարժառիթ ազդեցությունից:

Հետազոտության մեթոդները.Սույն հետազոտության ընթացքում կիրառել ենք հետևյալ մեթոդները՝ դասալսում, մասնագիտական գրականության ուսումնասիրություն, դպրոցական առաջավոր փորձի ուսումնասիրություն, դասապլանների և ծրագրերի ուսումնասիրություն և այլն:

Աշխատանքի կառուցվածքը.Սույն աշխատանքը կազմված է ներածությունից, հիմնական նյութից, դասպլանից, եզրակացությունից և գրականության ցանկից:

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հանրակրթության առարկայական չափորոշիչների և ծրագրերի բարեփոխման շրջանակներում «Օտար լեզուներ» բնագավառը ներկայանում է մի շարք լեզուներով։ Դրանք են անգլերենը, գերմաներենը, ռուսերենը և ֆրանսերենը։ Հանրակրթության պետական չափորոշչով թվարկված երկու լեզուներից առնվազն երկուսի ուսուցումը պարտադիր պահանջ է։ ԿԳՄՄՆ նախարարի N-405-Ն հրամանով երրորդ օտար լեզվի ընտրության հնարավորության հետ համակցությամբ՝ «Օտար լեզուներ» բնագավառը և այն ներկայացնող առարկաները միտված են աշակերտների շրջանում բազմալեզվության և միջմշակութային իրազեկության զարգացմանը։ Բնագավառը շեշտադրում է աշակերտի՝ բազմալեզու հաղորդակցության ժամանակ ակտիվ սոցիալական դերակատար լինելը, որտեղ օտար լեզուներով հաղորդակցությունը օգնում է աշակերտին ճանաչել աշխարհը և այլ մշակույթներ, իր մշակույթը ներկայացնել այլ լեզուներով, հանդես գալ որպես ստեղծագործ և քննական մտածողությամբ օժտված անհատ, համագործակցել անձնական, խմբային, համայնքային և հասարակական հնչեղության հարցերի լուծման նպատակով։ Օտար լեզուների դասավանդման նպատակն է ձևավորել տարբեր լեզուների տիրապետող անձ, որն ունակ է հաղորդակցվել և գործել ժամանակակից բազմալեզու և բազմամշակույթ աշխարհում։ Օտար լեզուների դասավանդման խնդիրները/նպատակին հասնելու ուղիներն են՝

- լեզվական գիտելիքների փոխանցում և ձևավորում,
- յուրացված լեզվական գիտելիքների կիրառման և հաղորդակցման հմտությունների և կարողությունների ձևավորում,
- ուսումնառողների համար օտար լեզվով հաղորդակցվելու համար նպաստավոր միջավայրի ստեղծում,

- քննական մտածողության, հետազոտականության և հիմնավորված դատողունակության զարգացում,
- ինքնուրույն ուսումնառության և ինքնազարգացման կարողությունների խթանում,
- միջմշակութային իրազեկության և բազմազանության նկատմամբ հարգալից վերաբերմունքի խրախուսում,
- ուսումնառողների նորարարական, ստեղծարար և համագործակցային կարողությունների զարգացում:

Վերոգրյալի հիման վրա կարող ենք նշել, որ ռուսաց լեզվի բանավոր խոսքի զարգացման հմտությունների զարգացման բուն գործընթացին անցնելուց առաջ անհրաժեշտ է սովորողի համար հստակեցնել մի շարք դրույթներ և նրա մոտ ձևավորել որոշակի տրամադրվածություն և վերաբերմունք: Աշակերտը պետք է գիտակցի լսելու, բանավոր խոսքի ընկալման հույժ կարևորությունը, հասկանա, որ լսելը լեզվի իմացության հիմնարար հմտություններից է՝ առանց որի ո՛չ քերականական գիտելիքները և ո՛չ բառապաշարը հնարավոր չէ փոխարկել կենդանի հաղորդակցության: Նա պետք է հասկանա, թե իր առջև ծառացած ներկայիս ու երկարաժամկետ նպատակների համայնապատկերում (ուսումնական գործընթաց, աշխատանքային հեռանկարներ և այլն) ինչ տեղ է գրավում լսելու հմտություններին տիրապետելը, հնարավորինս հստակ պատկերացնի, թե հատկապես ո՛ր խոսքը հասկանալու անմիջական կարիքն ունի նա (առօրյա զրույց, գործնական հաղորդակցություն, ելույթ և այլն): Աշակերտի հետ պետք է քննարկել արդյոք հնարավոր է խոսքի այդ տեսակի ընկալումը դիտարկել ընդհանուր խոսքի ընկալման շրջանակներից դուրս, որը գործնականում միայն մասամբ է լուծելի խնդիր: Որպեսզի ուսանողն ավելի հեշտ կողմնորոշվի, նրան նախօրոք պետք է ծանոթացնել, թե ըստ

ուսումնական ծրագրի իբրև վերջնական նպատակ նա ինչպիսի խոսք պետք է ունակ լինի լսել-հասկանալ. առօրյա խոսք, նորությունների հեռահաղորդումներ, զրույց, ելույթ և այլն։ Աշակերտին պետք է բացատրել, որ բանավոր խոսքի ընկալումը ոչ թե օժանդակ, երկրորդական հմտություն է, որին կարելի է հասնել երբեմն-երբեմն մի քիչ ժամանակ տրամադրելով, այլ մի հիմնարար հըմտություն, որին տիրապետելը աշխատատար և ժամանակատար գործ է և պահանջում է նվիրվածություն ու համբերություն։ Աշակերտը պետք է գիտակցի, որ միջավայրից դուրս օտար լեզու սովորելիս բանավոր խոսքի ըմբռնման հմտությունների մշակումը ջանք և կենտրոնացում է պահանջում։ Խնդիրը քննարկելիս ուսանողի համար պետք է հստակորեն տարբերակել, թե խոսքն ըմբռնելու հմտությունը զարգացնելիս ինչ տեղ ունեն լսել-ունկնդրելը և սոսկ լսելը՝ հաճախ հպանցիկ։ Եթե լսելը զուտ ֆիզիկական ունակություն է, մարդու հինգ զգայարաններից մեկը, ապա լսել-ունկնդրելը հմտություն է, որը պահանջում է ուշադրության որոշակի նպատակային կենտրոնացում։ Այն անմիջականորեն կապված է մարդու անցած փորձի ու փորձառության, գիտելիքների, նախատրամադրվածության, զգացմունքային կերտվածքի, ինչպես նաև՝ արտաքին ուղեկցող նպաստավոր կամ խանգարող գործոնների առկայության հետ։ Հետևաբար, լսելու ունակությունը զարգացնելու համար անհրաժեշտ է բարելավել ուշադրության որակը։ Բոլոր ուսանողները չեն, որ սովոր են արդյունավետ կերպով կենտրոնացնել իրենց ուշադրությունը։ Վարժանքների միջոցով՝ ուշադիր լսելու կարճ ժամանակահատվածներն աստիճանաբար երկարացնելով, կարելի է հասնել ավելի գործուն կենտրոնացման։ Վերը նշվեց, որ լսելիս գործի է դրվում անձի փորձառությունը և գիտելիքները։ Որքան ավելի բազմակողմանի են դրանք, այնքան ավելի արդյունավետ է ուշադիր լսելու գործընթացը, որովհետև անհատն ավելի հեշտությամբ է կարողանում լսած

տեղեկատվությունը համապատասխանաբար ըմբռնել: Մյուս կողմից կարող են առկա լինել ուշադրության կենտրոնացմանը խանգարող գործոններ, ինչպես օրինակ շրջապատի աղմուկը, խոսքի հստակության ոչ բավարար որակը, ոչ բարենպաստ շրջապատը: Ցանկալի է ուսուցման ժամանակ խանգարող հանգամանքների ծավալը հասցնել նվազագույնի: Ստացված արդյունքի տեսակետից շատ կարևոր է աշակերտի մոտ առկա զգացմունքային ֆոնը, որի վրա դասավանդողը հատուկ ուշադրություն պետք է դարձնի: Հաճախ սովորողն իր լսածը հասկանալու նախկին անհաջող փորձից ելնելով լսարան է գալիս արդեն իսկ բացասական նախատրամադրվածությամբ և որոշակիորեն վճռած, որ օտար լեզվով խոսքը հասկանալն իր ուժերից վեր է: Այս իրադրությունը հատկապես բնորոշ է անբավարար փորձ ունեցող առաջին, երկրորդ կուրսեցիներին: Անպայման պետք է հաղթահարվի նման բացասական, պարտվողական դիրքորոշումը: Հակառակ դեպքում առաջընթացն անհնար կլինի: Այդ նպատակով, առաջին հերթին պետք է պարզել, թե ինչպիսի փորձառությունից է բխում ուսանողի մերժողական, ոչ համագործակցային վերաբերմունքը: Նախապատմությունը սովորաբար կապված է լինում այն 8 փորձառության հետ, երբ նախկին դասավանդողներն առանց մանրակրկիտ կերպով սովորեցնելու ուսումնասիրվող օտար լեզվով հնչող խոսքի առանձնահատկությունները միանգամից ուսանողից պահանջել են հասկանալ նրա համար միանգամայն անհասկանալի խոսքը և կատարել ուսանողի կարողություններից վեր հանձնարարություններ: Նման մոտեցումը հիմնականում հանգեցնում է ձախողման, որի ամենավատ հետևանքը սեփական ուժերի նկատմամբ ուսանողի հավատի կորուստն է: Այն վերականգնելու և դրական տրամադրվածություն ստեղծելու նպատակով պետք է խնդրի նկատմամբ կիրառել աստիճանական բարդացման մարտավարություն և ուսանողին վարել-ուղեկցել այդ

ճանապարհով, որովհետև միայնակ նա գործնականում ի վիճակի չէ լինելու հաղթահարել այն։ Աստիճանական, քայլ առ քայլ աշխատանքով հնարավոր է հաղթահարել հնչող նյութի ընկալման հանդեպ ուսանողի սկզբնապես կուտակված վախը, զայրույթը կամ հուսահատությունը։ Ուստի աշխատանքները ծրագրելիս անհրաժեշտ է առաջնորդվել այն դրույթով, որ ունկնդրվող նյութի մակարդակը պետք է համապատասխանի ուսանողի հիմքային գիտելիքներին։ Մյուս կողմից նյութը պետք է հետաքրքիր և համահունչ լինի ուսանողի ներկայիս հետաքրքրություններին՝ առաջացնելով հետաքրքրվածություն։

Մենք առանձնացրել ենք այս ասպեկտը ոչ իբրև առանձին աշխատանքային փուլ, այլ՝ ընդգծելու համար դրա կարևորությունը։ Հնչած խոսքի վերարտադրությունը քննարկված ընդհանուր աշխատանքային կտավի հյուսվածքներից մեկն է։ Երբ ուսանողը հնչած խոսքը կրկնում է հատված առ հատված, բառ առ բառ, բառախումբ առ բառախումբ, նախադասություն առ նախադասություն՝ այնուհետև դրանք միմյանց կապակցելով, նա. ա) լավագույնս հասկանում է, թե ինչպես է արտասանվում այս կամ այն հնչյունը, բառը, կառույցը և ինչպես է իրականանում բանավոր խոսքի հոսքը, բ) միևնույն տեղեկատվությունը սեփական ձայնային ապարատի միջոցով լսելով ապահովում է խոսքի առավելագույն ընկալունակությունը, գ) սովորում է ինքնուրույն ճիշտ արտասանել խոսվածքը՝ այն համեմատության մեջ դնելով բնօրինակի հետ, դ) շտկում է արտասանական սխալները, ե) հաղթահարում է օտար լեզվով խոսելու հանդեպ ունեցած վախը, զ) ապրում է սեփական խոսքը վայելելու հաճույքը։ Տվյալ աշխատանքը սոսկ կրկնում է բնական միջավայրում օտար լեզու սովորելու պրոցեսը, որն է նմանակելով կրկնությունը՝ լինի դա երեխա, թե՝ մեծահասակ։ Դարեր շարունակ մարդիկ առանց գրի ու համակարգչի, օտար լեզու են սովորել՝հենց բնօրինակին կրկնել-նմանակելով։

Բանավոր խոսքի զարգացումը պետք է սկսել հենց երրորդ դասարանից: Երրորդ դասարանում ռուսաց լեզվի առաջին դասերը ծրագրով հատկացված են բանավոր խոսքին: Այս դասաժամերի ընթացքում բանավոր խոսքը պետք է գերակշռի: Այն մենք սկսում ենք ոչ թե բառերով, այլ՝նախադասություններով: Ռուսաց լզվի ուսուցման հիմնական նպատակը սովորողների բանավոր խոսքի ունակությունների և հմտությունների զարգացումն է, այսինքն՝ ուրիշի խոսքը հասկանալու և իր մտքերն արտահայտելու ունակության մշակումը: Ուստի, ինչպե՞ս առավելագույն չափով բարձրացնել դասի արդյունավետությունը՝գործնական արդյունքների հասնելու համար: Ինչպե՞ս պահպանել և ուժեղացնել սովորողների հետաքրքրությունը օտար լեզվի ուսուցման հանդեպ: Ինչպե՞ս հասնել ուսումնական պրոցեսի ակտիվացմանը: Ակտիվացումն ինքնին չի համարվում ինչ-որ նոր բան, սակայն օտար լեզվի համար այս խնդիրն ունի առանձնահատուկ նշանակություն: Հայտնի է, որ առարկայի նկատմամբ հետաքրքրասիրությունը նպաստում է ուսուցման արդյունավետությանը: Այս նպատակով էլ ես ձգտում եմ ռուսաց լեզվի նկատմամբ սովորողների մոտ սեր և հետաքրքրություն առաջացնել յոթերրորդ դասարանում՝ հենց առաջին դասից, և այս բանը զարգացնել ու պահպանել նաև հետագա տարիներին՝ տարբեր միջոցներով, հետաքրքիր նյութերի ընտրությամբ: Ուսումնական առաջին ամսվա ընթացքում յոթերրոդ դասարանցիների դասերին հրավիրում եմ 2-3 բարձր դասարանցիների, որպեսզի նրանք յոթերրորդ դասարանի դասագրքից ընթերցեն ցանկացած տեքստ, երգեն երգեր, որոնք սովորել են նախորդ տարիների ընթացքում, արտասանեն բանաստեղծություններ,նկարագրեն նկարներ, մասնակցեն երկխոսությանը: Այսպիսով, երրորդ դասարանցիները տեսնում են կոնկրետ արդյունքներ, որոնց կարելի է հասնել միայն ջանադիր, ակտիվ աշխատանքով:

Բանավոր խոսքը բաղկացած է երկու օղակներից՝ ունկնդրումից և խոսելուց:Ունկնդրումը (լսելով հասկանալը) խոսելու հետ միասին կազմում է խոսքի բաղկացուցիչ մասը: Միայն խոսելը դեռ չի նշանակում բանավոր խոսքի յուրացում: Ունկնդրումն ու խոսելը սերտորեն կապված են միմյանց, նպաստում են մեկը մյուսի զարգացմանը: Եթե խոսելը հանդիսանում է ռեպրոդուկտիվ, այսինքն՝ վերարտադրական գործունեություն, ապա ունկնդրումը՝ ռեցեպտիվ, այսինքն՝ ընկալական գործունեություն: Չնայած ունկնդրումն արտաքինից թվում է պասիվ գործունեություն, սակայն այն հենվում է սովորողների ճանաչողության վրա, որը և ակտիվ, բարդ գործընթաց է: Լսածի հասկանալն ապահովելու համար անհրաժեշտ են բազմաթիվ վարժություններ, որոնք կզարգացնեն սովորողների լսողական և տրամաբանական հիշողությունը: Սակայն նախքան վարժություններին անցնելը, ուսուցիչը պետք է քաջատեղյակ լինի այն դժվարություններին, որոնք հանդես են գալիս ունկնդրման ընթացքում: Ունկնդրման հետ կապված դժվարությունները լինում են տարբեր բնույթի.

1. Հոգեբանական՝ կապված լսվող խոսքի ընկալման և հասկանալու ընթացքի հետ:

2. Լեզվական՝ կապված տվյալ լեզվի առանձնահատկությունների հետ, ի տարբերություն մայրենի լեզվի:

3. Կառուցվածքային՝ կապված հաղորդման բովանդակության հետ:

Հոգեբանական բնույթի վարժությունների մեջ է մտնում ընկալման անդարձելիությունը, այսինքն՝ լսելը և հասկանալը ներքին մտային գործունեություն է, այն արտաքնապես ոչ մի կերպ չի արտահայտվում:

Աշակերտը պետք է կարողանա. 1.Լսել պատմվածքը և կազմել նրա պլանը:2.Լսել պատմվածքը և որոշել նրա հիմնական բովանդակությունը: 3.Լսել

տեքստը և պատասխանել ուսուցչի հարցերին: 4.Ինքնուրույն վերնագրել լսած տեքստը: 5.Լսել տեքստը և համառոտակի վերնագրել այն: 6.Գտնել տեքստի գլխավոր միտքը: 7.Լսել տեքստը երկու տարբերակով, ուշադրությաւն դարձնել երկուսի միջև եղած ընդհանուրի և տարբերությունների վրա: Տեքստը լսելով հասկանալն ստուգելու համար միջոց է հանդիսանում տեքստի շուրջ տարվող զրույցը, որի ընթացքում ի հայտ են գալիս բովանդակության ճիշտ և խորը հասկանալը, իրադարձությունների փոխադարձ կապը: Զրույցի ընթացքում երևան են գալիս տարբեր բնույթի դժվարություններ: Նման դեպքերում պետք է բացատրել, թե ինչպես ունկնդրել տեքստը, ինչի՞ն ուշադրություն դարձնել և ինչպե՞սգտնել գլխավոր միտքը: Սովորողների մոտ ռուսաց լեզվի հանդեպ ծագած հետաքրքրությունը ես մշտապես ձգտում եմ պահպանել աշխատանքի տարբեր եղանակներով ու ձևերով: Օրինակ՝ զույգերով աշխատանքը, որը կատարվում է տարբեր տեքստերի ընթերցանությունից հետո, շղթայական աշխատանքը, որը սովորաբար նախորդում է զույգերով աշխատանքին և անցկացվում է արագ տեմպերով, երկկողմանի թարգմանությունը, նկարներով աշխատանքը: Նկարների շուրջ տարվող աշխատանքը բանավոր զարգացման համար կարելի է համարել արդյունավետ, երբ արտահայտությունները միմյանց հետ տրամաբանորեն կապված են:

Ձայնագրությունների համակարգված ունկնդրումը նպաստում է խոսքային գործունեության բոլոր տեսակների զարգացմանը: Աշակերտի բանավոր խոսքը պետք է զարգացնել հիմնականում դասարանում: Չէ՞ որ նա ուրիշ ոչ մի տեղ օտար լեզվով չի խոսում, և միջավայրում կամ տանը այդ օգնությունը չի ստանում: Ռուսաց լեզվի դասերին կատարում եմ բանավոր խոսքի զարգացման հետևյալ վարժությունները.

1. Մենախոսություն և երկխոսությունառանձին նմուշների կրկնություն ուսուցչից հետո՝ անցած և նոր բառային միավորներով:

2. Տվյալ խոսքային նմուշների ընդլայնում:
3. Համանմանության միջոցով կազմել մենախոսություն և երկխոսություն:
4. Անգիր սովորել բանաստեղծություն կամ հատվածներ տեքստերից:
5. Կազմել երկխոսություն՝ թեմային համապատասխան:
6. Կազմել երկխոսություն՝ տվյալ իրադրությանը համապատասխան:
7. Նկարագրել նկարներ:
8. Պատասխանել հարցերին. ա) մեկը հարց տա բոլորին բ) բոլորը հարց տան մեկին գ) մեկը մյուսին հարց տան (շարքերով);
9. Հարցադրում - հարցեր տալու կարողությունը զարգացնելը նույնպես օտար լեզվի զարգացման կարևոր վարժություններից է:
10. Հաղորդում թեմայի վերաբերյալ:

Աշակերտը համադրական ընթերցանության որոշակի ժամանակահատվածում պետք է կարողանա հասկանալ տեքստի կամ տեքստի մի որևէ հատվածի բովանդակությունը և կարողանա վերարտադրել կամ պատասխանել հարցերին: 11. Կազմակերպել զրույց տրված թեմայով: Տեքստը վերարտադրել կրճատումով կամ պլանի, բանալի բառերի օգնությամբ: Մեծ տեղ եմ հատկացնում հարց ու պատասխանին: Ժամանակի ընթացքում այն վերածվում է կապակցված խոսքի: Զրույցի նպատակը պետք է լինի բանավոր խոսքի կայուն հմտություններ ստեղծելով հանդերձ՝ զուգընթացաբար նպաստել տեքստի բառապաշարի և քերականական նյութի մշակմանը:

Վերոգրյալի հաշվառմամբ հարկ ենք համարում նշել, որ՝ բանավոր խոսքի զարգացման աշխատանքներին հիմնավորապես սկսում ենք անդրադառնալ տարրական դասարաններում, երբ աշխատանքներ են կատարվում աշակերտների բառապաշարի հարստացման, լեզվամտածողության, գրագիտության,

տրամաբանության զարգացման, աշխարհայացքի և այլ բարոյակամային որակների ձևավորման ուղղությամբ՝ ստեղծելով որոշակի կրթական մակարդակ՝ ավագ դպրոցում խոսքի զարգացման աշխատանքները շարունակելու համար: Ընդ որում՝ տարրական դասարաններում խոսքի զարգացման աշխատանքներին անդրադառնում ենք բոլոր առարկաների դասաժամերին. սովորեցնում ենք ճիշտ կազմել բանավոր և գրավոր խոսք ոչ միայն մայրենի, այլ նաև օտար լեզուներով, կատարում համեմատություններ օտար լեզվի շրջանակներում՝ նշելով տարբերություններն ու ընդհանրությունները, սովորեցնում ենք արտահայտել սեփական ապրումները, մտքերն ու զգացմունքները, գաղափար ենք տալիս շրջապատող իրականության մասին, աշակերտները սովորում են իրենց մտքերն արտահայտել և ներկայացնել տրամաբանական հաջորդականությամբ և ձեռք են բերում դատողական մտածողություն: Երաժշտություն, Կերպարվեստ և Տեխնոլոգիա առարկաների ուսուցման ժամանակ ապահովում ենք աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, սովորեցնում ընկալել գեղեցիկը, դրականը, զարգացնում ստեղծագործական երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, երաժշտական լսողությունը, ինչը ևս օգնում է խոսել ձայնային ճիշտ ելևէջումներով, ունենալ արտահայտիչ արտասանություն և առոգանություն:Ավագ դպրոցում ևս խոսքի զարգացման աշխատանքներում կարևոր է միջառարկայական կապերի ապահովումը, քանի որ այդ տարբերակով է հնարավոր առավել լիարժեք իրականացնել աշակերտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, ձևավորել հասարակության լիարժեք անդամ՝ հարուստ բազմազան ու բազմակողմանի գիտելիքներով, որոնց լիարժեք յուրացման, վերլուծության ենթարկելու և սեփականը դարձնելու շնորհիվ աշակերտները կունենան սուր ու ճկուն միտք, կապահովվի մտավոր զարգացման միասնություն: Քանի որ կյանքը միասնական է և

անմիջականորեն պետք է կապվի բոլոր առարկաների ուսուցման հետ, ուստի բոլոր առարկաները պետք է դիտվեն մեկ ամբողջության բաղադրիչներ: 5-րդ դասարանում ուսուցման ձևը փոխվում է. տարրականից անցնելով միջին դպրոց,ապա ավագ՝ աշակերտն սկսում է ուսումնասիրել նոր առարկաներ, որոնք պահանջում են աշակերտի մտահորիզոնի ընդլայնում և մտածողության զարգացում: Ուսուցման այս փուլում աշակերտների մեջ պետք է ձևավորել սեր և հետաքրքրություն ուսուցանվող առարկայի նկատմամբ: Ավագ դպրոցում շարունակվում են աշակերտների վերացական մտածողության զարգացմանն ուղղված աշխատանքները, միայն թե կարևոր է, որ ուսումնական գործընթացը ճիշտ կազմակերպվի և միտված լինի աշակերտների ճանաչողական ունակությունների զարգացմանը: Կարևոր է նաև, որ բոլոր առարկաների ուսուցիչները հստակ պատկերացնեն այն դժվարությունները, որոնց հետ աշակերտներն առնչվում են ուսուցման ընթացքում, և առաջարկեն դրանց հաղթահարման առավել արդյունավետ ուղիներ: Փորձը ցույց է տալիս, որ 5-րդ դասարանում լավ սովորողների առաջադիմությունն ընկնում է, ուսուցիչներն սկսում են բողոքել աշակերտների աղքատիկ բառապաշարից, խոսքային դժվարություններից, սակայն այս դեպքում պետք է հաշվի առնել, որ այդ բոլոր թերություններն ու դժվարությունները կապված են աշակերտների տարիքային առանձնահատկությունների և հոգեկան տագնապների հետ, և դա է պատճառը, որ տարրականից միջին դպրոց անցումը զգալիորեն ազդում է աշակերտների առաջադիմության վրա: Այս պարագայում ուսուցանվող բոլոր առարկաների ուսուցիչները, դպրոցի ընդհանուր պահանջներին համապատասխան, պետք է դասերը դարձնեն հետաքրքիր ու գրավիչ՝ օգտագործելով խթանման արհեստական մեթոդներ:

Հաղորդակցական կարողությունները հիմնականում զարգացնում ենք դասագրքերում ընդգրկված բնագրերի, տեքստային աշխատանքների և գործնական վարժությունների հիման վրա, հետևաբար դասագրքերի նյութերը պետք է ընդգրվեն լեզվառճական և թեմատիկ բազմազանության սկզբունքով, որոնք պետք է պարունակեն աշխարհաճանաչողական գիտելիքներ, ձևավորեն սովորողների արժեհամակարգը և աշխարհայացքը, ինչպես նաև զարգացնեն աշակերտների լեզվամտածողությունը, ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու հմտություններն ու կարողությունները: Ավագ դպրոցում ռուսաց լեզվի հիմնական բաժինների ուսուցմանը զուգահեռ յուրաքանչյուր դասաժամի պետք է ժամանակ հատկացնել կապակցված խոսքի, ոճագիտության և գործնական գրությունների ուսուցմանը:

Ավագ դպրոցում խոսքի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն նաև պատկերավորման միջոցների ուսուցումը և դրանց կիրառումը խոսքում: Աշակերտները պետք է կարողանան առանձնացնել դրանք և ինքուրույն կիրառել խոսքում (տարրական դասարանում այս հմտությունների ձևավորման նախահիմքերն արդեն դրվել են նկարագրական խոսքի ձևավորման ժամանակ): Գեղարվեստական երկի ուսուցման ընթացքում, աշակերտներիուշադրությունը հրավիրելով նկարագրական հատվածների վրա (դիմանկար, բնանկար և այլն), առաջարկում ենք դրանք վերարտադրել գեղարվեստորեն՝ գրավոր կամ բանավոր: Կարդացած ստեղծագործության վերաբերյալ սեփական կարծիք հայտնելու, վերլուծելու, ասածը հիմնավորելու համար փաստեր բերելու կարողությունների ձևավորման համար պետք է պահանջել, որ աշակերտները կիրառեն գեղարվեստական արտահայտչամիջոցներ և լեզվական հնարներ: Կարելի է առաջարկել աշակերտներին պահել օրագիր, որտեղ կգրանցվեն բնագրերից ստացած տպավորությունները և դուր եկած հատվածները, գեղեցիկ ձևավորել այն: Կարելի է

նաև ստեղծագործություններից դուրս գրել նկարագրական հատվածները և կիրառել դրանք իրենց խոսքում մեկ այլ երևույթի վերաբերյալ (հայրենիքի, քաղաքի, ծննդավայրի և այլն)։ Աշակերտների դատողական մտածողության զարգացման, գնահատողական խոսք կառուցելու կարողության ձևավորման համար հետաքրքիր առաջադրանք կարող է լինել ուսումնական նյութի հիմնական գաղափարի արտահայտումը առած-ասացվածքների միջոցով, քանի որ դրանք ամրապնդում են ասելիքը, ունեն գաղափարական, կրթական և դաստիարակչական մեծ նշանակություն։ Աշակերտներին հանձնարարում ենք բնագրի հիմնական իմաստն արտահայտել ասացվածքի միջոցով և տալ մեկնաբանություն։ Աշխուժություն մտցնելու համար կարելի է երբեմն մեկնաբանել նաև հումորային տարբերակով։Ուսուցման որակը բարձրացնելու համար արդեն 10-րդ, 11-րդ դասարաններում կարելի է առաջարկել աշակերտներին, որ յուրաքանչյուր շաբաթվա վերջում ամփոփեն իրենց սովորածն ու յուրացրածը և ներկայացնեն դասարանում։ Այս առաջադրանքը կատարելու համար առաջարկվում է խոսքը կազմել տարբեր ոճերով՝ գնահատելով յուրացրածի արդյունավետությունը, քննարկել, թե որքանով է կիրառելի և որտեղ կարելի է կիրառել իրենց սովորածը։ Բնականաբար, արտահայտվելիս աշակերտների խոսքը պետք է կառուցվի ճիշտ ու գեղեցիկ, տրամաբանված և հիմնավորված փաստերով։ Ավագ դպրոցի բարձր դասարաններում կարելի է թեմայի շրջանակներում անցկացնել դաս-բանավեճ, որի արդյունքում աշակերտները ձեռք կբերեն գրագետ բանավիճելու մշակույթ, բարեկիրթ պահվածք, պատշաճ և վայելուչ վարքագիծ, կսովորեն, որ բանավիճում են տվյալ թեմայի շուրջ և ոչ թե բանավիճողի հետ։ Ավագ դպրոցականը արդեն միջին դասարաններում սովորել է, թե ինչպես պետք է տեղեկություն հավաքի իրեն անհրաժեշտ նյութի վերաբերյալ, դրա հիման վրա կառուցի իր խոսքը, որը պետք է ունենա իր հստակ

կանոնները՝ տեղեկության հավաստիություն, անաչառ վերաբերմունք, նյութի ամբողջական ու հակիրճ ձևակերպում, պարզ ու հստակ շարադրանք: Արդեն ծանոթ լինելով խոսքի ոճերին՝ աշակերտը պետք է կարողանա իր բանավոր և գրավոր խոսքը կառուցել տարբեր ոճերով: Այս կարողությունների ձևավորումը աշակերտների մոտ կարելի է զարգացնել և՛ անհատական, և՛ խմբային տարբերակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ռուսաց լեզվով հաղորդակցվելու կարողությունը օգնում է աշակերտին հաջողությունների հասնել ոչ միայն ուսման մեջ, այլև հետագայում՝ կյանքի և աշխատանքային տարբեր իրադրություններում: Ուստի անհրաժեշտ է մեծ պատասխանատվությամբ վերաբերվել բանավոր խոսքի դասավանդմանը և աշակերտների համար ստեղծել կենդանի, աշխույժ զրույցի տրամադրող իրավիճակներ, որոնք կապահովեն ակտիվ և հետաքրքիր դաս: Որպեսզի աշակերտներն առավելագույն օգուտ ստանան դասից և ավելի ազատ հաղորդակցվեն միմյանց հետ, անհրաժեշտ է նրանց մեջ սերմանել դրական վերաբերմունք լեզվի նկատմամբ, նվազագույնի հասցնել նրանց վախերն ու բարդույթները և ամեն կերպ քաջալերել աշակերտների միջև հաղորդակցությունը: Բանավոր խոսքի զարգացման աշխատանքները կազմակերպելու համար կան բազմաթիվ ծրագրեր ու մեթոդական ձեռնարկներ, որոնց մեջ հիմնական շեշտը դրվում է բառապաշարի հարստացման, քերականական կանոնների ուսուցման վրա, սակայն այդ ամենը բավարար չէ. առավել կարևոր է, որ մարդն օժտված լինի բարու, գեղեցիկի, մարդասիրական գաղափարներով, ունենա հարուստ ու համակողմանի զարգացած ներաշխարհ: Դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ իր հետ պետք է տանի ուսումնառության արդյունքում ձեռք բերած փորձն ու գիտելիքները, որոնք պետք է դառնան նրա սեփականությունը, վերափոխվեն, վերաձուլվեն և ձևավորեն նրա ներաշխարհը: Դպրոցում լիարժեք կրթություն և դաստիարակություն տալու դեպքում հնարավոր է ձևավորել աշակերտի անհատականությունը, կերտել այնպիսի կերպար, որը կլինի մտածող, ստեղծագործող, կունենա բարոյակամային բարձր որակներ, որոշակի սկզբունքներ, ձևավորված աշխարհայացք և արժեհամակարգ՝ դառնալով անհատականություն՝ հասարակությանը տալով այն, ինչ ձեռք է բերել ուսուցման,

կրթության և դաստիարակության արդյունքում:Ելնելով իմ փորձից՝ պետք է ասեմ, որ ռուսաց լեզվի տիրապետման հաջողությունը կախված է այն բանից, թե ինչպես սովորեցնել ինքնուրույն ըմբռնել բառաքերականական նյութը և այն օգտագործել բանավոր խոսքում ու ընթերցանության մեջ: Ես կարծում եմ, որ դասի որակը մեծ մասամբ կախված է ուսուցչի ինտենսիվ աշխատանքից, ուսուցման ուսուցողական և զարգացման բնույթից: Քանի որ բանավոր խոսքը օտար լեզուների ուսուցման կենտրոնական օղակներից մեկն է, պետք է ձգտել հասնել այն բանին, որ յուրաքանչյուր դպրոցավարտ, իր յուրացրած բառապաշարի սահմաններում կարողանա խոսել առօրյա հարցերի շուրջ, հասկանալ ուրիշի ասածը և ուղեկցել որևէ ֆրանսիացի հյուրի (կամ զբոսաշրջիկի):Հաղորդակցական կարողությունները հիմնականում զարգացնում ենք դասագրքերում ընդգրկված բնագրերի, տեքստային աշխատանքների և գործնական վարժությունների հիման վրա, հետևաբար դասագրքերի նյութերը պետք է ընդգրվեն լեզվառճական և թեմատիկ բազմազանության սկզբունքով, որոնք պետք է պարունակեն աշխարհաճանաչողական գիտելիքներ, ձևավորեն սովորողների արժեհամակարգը և աշխարհայացքը, ինչպես նաև զարգացնեն աշակերտների լեզվամտածողությունը, ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու հմտություններն ու կարողությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ռուսաց լեզու». հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր: Երևան:
2. ՎՊՀ-ի գիտական տեղեկագիր, պրակ Ա, Երևան, 2018, էջ 298- 306:
3. Ղույումչյան Գ. Ե., Մանկավարժություն, գիրք II, Ե., 2017, էջ 232:
4. Դյուի Ջ., Դպրոցը և հասարակությունը, «Դպիր» մանկավարժական հանդես, Երևան, 2008, 88 էջ:
5. Ռուսաց լեզվի դասագիրք, 10-11-րդ դասարանների:

План-конспект урока по русской литературе в 10-м классе.

Мкртчян Лусине Хажаковна, учитель русского языка и литературы

Тема: М.Ю. Лермонтов. Стихотворение «Смерть Поэта».

Цели:

1. Актуализировать имеющиеся знания учащихся о жизни и творчестве М.Ю. Лермонтова.
2. Учить анализировать лирические произведения на примере стихотворения М.Ю. Лермонтова «Смерть Поэта».
3. Содействовать развитию памяти, мышления, воображения посредством ТСО.
4. Воспитывать интерес к урокам русской литературы, творчеству поэтов XIX века.

Ход урока

I. Организационный момент

Замолкли звуки чудных песен,
Не раздаваться им опять:
Приют певца угрюм и тесен,
И на устах его печать.

- Эти строки были посвящены М.Ю. Лермонтовым А.С. Пушкину. Но какой-то неведомой рукою они наложили свою скорбную печать и на самого автора.

- Сегодня мы вновь обратимся к жизни и творчеству одного из величайших поэтов XIX века М.Ю. Лермонтову.

II. Актуализация знаний биографии М.Ю.Лермонтова

(Выходят учащиеся, предварительно подготовившие совместно с учителем биографические сведения о М.Ю. Лермонтове.)

III. Анализ стихотворения М.Ю. Лермонтова «Смерть Поэта»

1. Подготовка к восприятию

- Стихотворение было написано сразу после кончины Пушкина, лишь только весть о ней облетела Петербург. Это лирический монолог, в котором гневная речь поэта-оратора состоит из резко меняющихся по своей ритмике отрывков. Столь же резко меняется тональность и стиль. С одной стороны, возвышенная, декламационная лексика, восходящая к жанру оды, а с другой – задумчивая речь, состоящая из воспоминаний, размышлений, сожалений. Давайте внимательно прочитаем это стихотворение вслух, а затем проанализируем его.

2. Первичное восприятие

(Учитель и учащиеся читают стихотворение.)

3. Анализ стихотворения.

- С одной стороны автор использует обличительные эпитеты, броские и негодующие:

Не вынесла душа поэта
Позора мелочных обид,
Восстал он против мнений света
Один, как прежде…и убит!

- С другой стороны он использует слова и образы, взятые из элегий:

Замолкли звуки чудных песен,
Не раздаваться им опять:
Приют певца угрюм и тесен,
И на устах его печать.

IV. Итог урока

- Что нового и интересного узнали о жизни М.Ю.Лермонтова.
- С каким произведением познакомились, и какую роль оно сыграло в жизни поэта?
- Кому было посвящено стихотворение «Смерть Поэта»?
- Чей образ изобразил М.Ю.Лермонтов в этом стихотворении?

V. Постановка домашнего задания

Чтение наизусть отрывка из стихотворения «Смерть Поэта».

УРОК ОКОНЧЕН. ДО СВИДАНИЯ, РЕБЯТА!

План-конспект урока по русскому языку в 11-м классе.

Тема: Сложноподчиненое предложение с несколькими придаточными

Мкртчян Лусине Хажаковна, учитель русского языка и литературы

Цели:

- *Обучающие*: углубить знания о сложноподчиненном предложении - конструкции с несколькими видами придаточных; усвоить понятие неоднородное, последовательное, однородное подчинения, комбинированное подчинение; учить видеть структуру и воспроизводить схемы предложений;
- *Развивающие*: совершенствование пунктуационных навыков, практических навыков анализа сложного предложения, развития навыков использования сложноподчиненного предложения в речи, умения конструировать сложноподчиненное предложение;
- *Воспитывающие*: продолжить формирования привычки к труду, самостоятельному усвоению материала; умению работать в паре, оценивать работу одноклассника; обогащать словарь учащихся лексикой нравственной тематики; вызвать учащихся на размышления о направленности личности.

Установка урока: организация учебного процесса с целью обеспечения достижения всеми учащимися базового уровня по теме, создание условий для усвоения материала на более высоком уровне для определенной группы учащихся.

Ход урока

1. Организация учащихся на урок. Цели и задачи урока; оформление записей в рабочей тетради.

Слово учителя:

- Мы продолжаем изучать тему "Сложноподчиненное предложение". Задачи урока: углубить знания о Итак, сложноподчиненное предложение с несколькими придаточными, характер подчинения, виды подчинения; отрабатываем практические навыки и умения слышать, видеть и графически воспроизводить структуру предложения; попутно повторим материал по анализу, синтаксической характеристике сложного предложения.

2. Реализация домашнего задания. Уплотненный опрос:

а) 4 ученика работают с карточками индивидуального задания у доски(карточки № 1, 2, 3, 4

б) Класс работает в парах. Задание: опрос - проговаривание изученного теоретического материала по теме урока, чертят, объясняют графические схемы сложноподчиненного предложения с разными типами подчинения.

сложноподчиненном предложении с несколькими придаточными.

Выводы по проверке домашнего задания и повторению готовят учащихся к следующему виду работы.

3. Графический диктант.

1. Я увидел, как звезды стали туманиться и терять свою лучистость, как легким вздохом пронеслась по земле прохлада.



Однородное подчинение с придаточными дополнительными (изъяснительными).

2. Когда наша шлюпка направилась от фрегата к берегу, мы увидели, что из деревни бросились бежать женщины и дети.



Неоднородное подчинение с придаточными обстоятельственным (времени) и дополнительным.

3. Долго было слышно, как он шагал туда, где светится огонек.



Последовательное подчинение с придаточными дополнительным (I ст.), обстоятельственным - места(II ст.)

Итоги урока. Учащиеся подводят итоги урока, говорят, что нового узнали они на уроке, чему научились.

Учитель обобщает выводы, комментирует оценки, выставленные за урок (оценки получили все учащиеся за теоретический материал и практическую работу, за самостоятельную работу - после проверки ее на следующем уроке)

УРОК ОКОНЧЕН. ДО СВИДАНИЯ, РЕБЯТА!